ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ / ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ/ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) ՍՄ ներկայացնել սերտիֆիկացման հայտեր և բողոքներ՝ ՍՄ ոլորտին համապատասխան,

2) Կատարել սերտիֆիկացման պահանջները, այդ թվում՝ համապատասխան փոփոխությունների իրականացումը, երբ դրանք պահանջվում են ՍՄ-ի կողմից,

3) եթե սերտիֆիկացումը վերաբերում է գործող արտադրությանը, ապա սերտիֆիկացված արտադրանքը շարունակաբար համապատասխանի արտադրանքին ներկայացվող պահանջներին,

4) Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝

- գնահատման և համապատասխանության հսկողության (եթե պահանջվում է) իրականացման համար, այդ թվում՝

ուսումնասիրության համար փաստաթղթերի և գրառումների տրամադրումը, և համապատասխան

սարքավորումների, տեղանքի(ների), տարածքի(ների), անձնակազմի և պատվիրատուի

ենթակապալառուների ուսումնասիրության մատչելիության ապահովումը,

- գանգատների հետաքննության համար,

-անհրաժեշտության դեպքում դիտորտների մասնակցության համար

5) իր արտադրանքը չօգտագործել այնպես, ինչը կարող է հեղինակազրկել ՍՄ և չանի որևէ հայտարարություն իր արտադրանքի սերտիֆիկացման մասին, որը ՍՄ կարող է համարել մոլորեցնող կամ չթույլատրված,

6) սերտիֆիկատի գործողության ժամկետը կասեցվելու, չեղյալ ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում դադարեցնել բոլոր տեսակի գովազդային նյութերի օգտագործումը, որոնք պարունակում են որևէ հղում այդ մասին և ձեռնարկի սերտիֆիկացման սխեմայով պահանջվող գործողությունները,

7) եթե պատվիրատուն սերտիֆիկացման փաստաթղթերի պատճենները տրամադրում է ուրիշներին, ապա այդ փաստաթղթերը պետք է կրկնօրինակվեն ամբողջությամբ կամ ինչպես սահմանված է սերտիֆիկացման սխեմայով,

8) իր արտադրանքի սերտիֆիկացումը լրատվամիջոցների հետ հաղորդակցության միջոցներում վկայակոչելիս ՝ փաստաթղթերի, բրոշյուրների կամ գովազդի միջոցով, պատվիրատուն պետք է համապատասխանի ՍՄ-ի կամ սերտիֆիկացման սխեմայով սահմանված պահանջներին,

9) համապատասխանել սերտիֆիկացման սխեմայով սահմանված համապատասխանության նշանների օգտագործմանը և արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող բոլոր պահանջներին,

10) պահպանել իրեն հայտնի դարձած սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վերաբերյալ բոլոր գանգատների գրառումները և սերտիֆիկացման մարմնի պահանջի դեպքում տրամադրի դրանք, և

- ձեռնարկի համապատասխան գործողություններ՝ նման գանգատների և սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վրա ազդող արտադրանքի հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ,
- փաստաթղթավորի ձեռնարկված գործողությունները.

11) անհապաղ տեղեկացնել սերտիֆիկացման մարմնին այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման պահանջներին համապատասխանելու նրա կարողության վրա: